# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1560 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 650-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մայիսի 4-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԷԼԻՏ-ՇԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 650-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «Մոդել-LSSO. 5-0.7-Y.; Գոլորշու գեներատոր 500 կգ/ժ հզորությամբ; 0,7 ՄՊա յուղային ճնշմամբ

աշխատող» բառերը փոխարինել «Ձրախողովակային շոգեկաթսա 0.1-1 տոննա շոգու արտադրողականությամբ TAIGUO LSS 0.5-0.7-Y» բառերով.

2) 4-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» սյունակում «Թերմոպլաստե մանրաթելերից պատրաստված պադոն; 900-700-25մմ և 1150-600-25մմ չափերի» բառերը փոխարինել «Պլաստմասսայե կարծր տակդիր-սալեր՝ բետոնի բլոկների արտադրության համար օգտագործվող՝ ապակեմանրաթելի համադրությամբ 900-700-25մմ 1100 հատ, 1150-600-25մմ 300 հատ, առանց ապրանքանիշ» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ